նէր, որուն նշաններն այսօր էլ տեսնուում են Համատանի ճանապարհի վրայ, քաղաքից կէս մղոն հեռու, մի աշտարակաւոր դուռն վրայ, որ ըստ աւանդութեան քաղաքի դուռն է եղել:

"Սուլթան Մահմէդ Խօդաբէնդ, երբ միացրեց Հնդկաստանի, Ուզբեկների եւ Թիւրքիայի մի մասն իր պետութեան հետ, հին Տէրբենթը քաղաքի աւերակներով շրջեց այդ քաղաքը, եւ դարձրեց իր կայսրութեան մայրաքաղաք: Խօջա Րէշիդ, Պարսկաստանի Թագաւորը, որին Յովսէփ Բարբարուսը (Jos. Barbarousse) անուանում է Գէորգ, քանդեց Սուլթանիէի քաղաքը բնակիչների ապստամբութեան պատճառով, իսկ Լենկթիմուր բոլորովին կործանեց. ամենագեղեցիկ շինութիւնն այժմ մի մզկիթ է, ուր գանուում է Խօդաբէնդի գերեզմանը. նա երեքդռնանի է եւ ամենեւին անապից կամ պղնձից չէ շինուած, ինչպէս ասում է Բիզարրիւսը, այլ յղկուած պողպատից: Այդ քաղաքը այժմ 6000 բնակիչ ունի:"

Ընձամբ կամենալով ստուգել այդ իրողութիւնը, ես մի քանի անգամ թէհրան գնալիս, երբ իջեւանել եմ Համանուն Սուլթանիէ գիւղում, հետազօտութիւններ եմ կատարել. բազմաթիւ աւերակները, մինչեւ այսօր դեռ կանգուն մնացած, թէեւ կիսաւեր, հռչակաւոր "Սուլթանիէ" մզկիթը, լայնատարած եւ ահագին շրջակայ դաշտերը, թուրք բնակիչների աւանդութիւնը՝ թէ յառաջ Սուլթանիէի բնակիչները քրիստոնեայ են եղել, վերջապէս տեղացիների հաստատմամբ, աւերակների մէջ խաչքարներ եւ այլ քրիստոնէական նշաններ գտնելը՝ — այդ բոլորը ցոյց է տալիս, որ Սուլթանիէն՝ արդարեւ՝ մի ժամանակ հզօր